Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ. Գույանին

Հաշվետվություն գործուղման մասին

- **Գործուղված անձ**

Մթնոլորտային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ Լարա Սարգսյան:

- **Երկիր/Քաղաք/Ժամկետ**

Բելգիայի թագավորություն, քաղաք՝ Բրյուսել 2023 թվականի ապրիլի 25- ից 28-ը:

- **Հրավիրող կողմ՝**

Արևելյան գործընկերության «ԵՄ4 կլիմայի համար» տարածաշրջանային ծրագիր:

- **Նպատակը**

Մասնակցություն՝ «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի ներքո իրականացված «Կլիմայական հարցերի ներառմանն ուղղված գործողություններն Արևելյան գործընկերության երկրներում. առաջարկություններ էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտների համար» խորագրով աշխատաժողովին: Տարածաշրջանային աշխատաժողովի նպատակն էր հարթակ ստեղծել ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների փորձի ներկայացման և քննարկման՝

կլիմայական հարցերի ներառմանն ուղղված գործողություններն ազգային քաղաքականության մեջ ներառելու, ինչպես նաև պլանավորման և իրականացման ընթացքում հանդիպող մարտահրավերների փոխանակման համար:

**Քննարկված թեմաները**

Աշխատաժողովի ընթացքում կողմ երկրների մասնակիցները ներկայացրեցին իրենց Երկրի փորձը և ակնկալիքները մասնավորապես՝

- Կլիմայի ինտեգրման հարցերը ԵՄ մակարդակով, որը հիմնված է բյուջետավորման և ֆինանսական գործիքների վրա,
- Տաքսոնոմիայի կանոնակարգ,
- NDC-ի առաջնահերթությունները
- Լավագույն փորձի օրինակներ՝ ԵՄ երկրներից
- Անմիջական կապը (մեյնսթրիմինգի) գյուղատնտեսության ոլորտում
- Անմիջական կապը (մեյնսթրիմինգի) էներգետիկայի ոլորտում
- ԱլԳ երկրներում գործողությունների ինտեգրում
- Մեյնսթրիմինգի գործունեության ամփոփում
- Գենդերային ինտեգրում կլիմայի փոփոխության հարցերում
- Աշխատաժողովից առաջ մասնակիցներին տրամադրված հարցաթերթիկների արդյունքների ներկայացում
- Ուսուցողական դասընթացներ – 2 խումբ, հիմնական մարտահրավերները և հնարավոր լուծումները՝ «անմիջական կապ էներգետիկայի ոլորտում», «անմիջական կապ գյուղատնտեսության ոլորտում» թեմաներով:

Ես՝ Լարա Սարգսյանս ներկայացրել եմ սահիկաշարի տեսքով Հայաստանի Հանրապետությունում կլիմայի փոփոխության վերաբերյալ գործընթացների փորձը և ակնկալիքներն, ինչպես նաև Արևելյան գործընկերության երկրներում Կլիմայական գործունեության շրջանակներում առաջարկություններ էներգետիկայի և գյուղատնտեսության համար թեմայով:

- **Արդյունքներ**

Հաշվի առնելով, որ EU4Climate նախագիծն աջակցում է ԵՄ Արևելյան գործընկերության (ԱլԳ) վեց երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ՝ պայքարելու կլիմայի փոփոխության դեմ, և նպատակն է աջակցել Արևելյան Գործընկերության կողմ երկրների կողմից կլիմայի հետ կապված քաղաքականության մշակմանը և իրականացմանը, որը նպաստում է ցածր արտանետումների և կլիմայի նկատմամբ դիմակայուն զարգացմանը, ինչպես նաև Կլիմայի փոփոխության մասին Փարիզի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Տարածաշրջանային այս աշխատաժողովը հնարավորություն ընձեռեց տեղեկատվության փոխանակման, որն արդյունավետ հենք կստեղծի ոլորտային քաղաքականությունների մշակման գործում:

- **Նշումներ**

Աշխատաժողովին մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի մասնակիցներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, Եվրոմիության, ՄԱԶԾ-ի ներկայացուցիչներ:

Մթնոլորտային քաղաքականության
վարչության գլխավոր մասնագետ

Լ. Սարգսյան